

1870 ՎԻ.ԼԵՆԻՆ 1970

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԱՆՃԱՐԸ

Ա. Մ. ԹԵԼՈՒՆՑ

Պատմության խոր, հեղափոխական իրադարձություններով հագեցված դարաշրջանները բնութագրվում են նաև մեծ տեղաշարժերով մարդկության հոգևոր կյանքում։ Հասարակության տնտեսական ու սոցիալական կյանքի խմորումները իրենց արտացոլումն են գտնում մարդկանց գաղափարական հարաբերությունների մեջ, կյանքի են կոչում պատմական շարժումը իմաստավորող ուսմունքներ, որոնք իրենց տեսական հասունության համեմատ թափանցում են ծավալվող պրոցեսների տրամաբանության մեջ և գաղափարական զենք ծառայում մաքառող ուժերի համար։

Արդի դարաշրջանը կյանքի է կոչել մի գաղափարախոսություն, որը բացառիկ դեր է խաղում ամբողջ մարդկության կյանքում, նրա պատմական ճակատագրում՝ շնորհիվ իր գիտական հիմնավորվածության, հեղափոխական էության և ստեղծագործական բնույթի։ Դա գիտական կոմունիստական գաղափարախոսությունն է, որը հիմնադրել են Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը և պատմական նոր ժամանակաշրջանում համակողմանի զարգացրել և նոր աստիճանի է բարձրացրել Վ. Ի. Լենինը։

Այժմ, երբ ամբողջ աշխատավոր մարդկությունը մեծ երախտագիտությամբ նշում է իր հանճարեղ ուսուցիչ ու առաջնորդ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը, հատուկ նշանակություն է ստանում նրա գաղափարական ժառանգության ուսումնասիրությունը, խոր յուրացումն այն ուսմունքի, որով Լենինն ապրում է ամեն մի նոր սերնդի հետ, ապրում է որպես նրա ժամանակակիցն ու ուսուցիչը, իմաստուն խորհրդատուն և հանճարեղ տեսաբանը։

Վ. Ի. Լենինի գործունեությունը տիտանական էր։ Դա գործունեությունն էր մի մարդու, որը մեծ մտածող էր, գիտնական ու փիլիսոփա, դասակարգային մեծ ճակատամարտերի և պատմության մեծագույն հեղափոխության ստրատեգ ու ղեկավար։ Հիրավի, այդ տիտան մարդու մեջ մարմնացել էր այն ամենը, ինչ խորապես մարդկային է, խտացվել էր մտքի այնպիսի կարողություն, թափ ու խորություն, որ արտահայտվում են հանճար բառով, լեռնացել էին այնպիսի կամք, վճռականություն ու եռանդ, որ միայն պատմության մեծագույն շրջադարձային ժամանակներն են կյանքի կոչում, ստեղծագործական այնպիսի ավյուն, որն ինքնին պատմական նոր դարաշրջան էր ավետում։

Գիտական կոմունիզմի մեծ հիմնադիր Կարլ Մարքսը իր, որպես մտածողի և գործչի բնութագրիչ գիծը ձևակերպել է հակիրճ, բայց խոր մի արտահայ-

տությամբ՝ «նպատակի միասնություն»։ Նպատակի միասնությունը, նպատակասլացությունը նույնպես և Լենինի հեղափոխական ու տեսական գործունեության ամենաբնորոշ կողմն էր։ Պրակտիկ կոնկրետ հարցեր լուծեր նա, թե տեսական կնճռոտ պրոբլեմներ, պատմական անցյալի հարցերով զբաղվեր, թե կանխատեսեր ապագայի ուրվագծերը՝ նրա միտքն ու կամքը մշտապես ուղղված էին մի նպատակի՝ ստեղծել այնպիսի հասարակական կարգ, որտեղ մարդը կարողանա ապրել իր արժանիքների լիակատար գիտակցմամբ և ըստ ամենայնի դրսևորի իր լավագույն ունակություններն ու հակումները։

Խոսելով իր մեծ նախորդների մասին, Լենինը հատուկ ընդգծում էր նրանց տեսական ծառայությունը. «բանվոր դասակարգին Մարքսի և Էնգելսի մատուցած ծառայությունները մի քանի բառով կարելի է արտահայտել այսպես. նրանք բանվոր դասակարգին սովորեցրին ինքնաճանաչողություն ու ինքնագիտակցություն, և երազանքների տեղը դրին գիտություն»[1]։

Աշխատավոր մարդկության ազատագրման պայմանների և ուղիների մասին Մարքսի և Էնգելսի ստեղծած գիտության պաշտպանությունն ու համակողմանի զարգացումը պատմության նոր ժամանակաշրջանում, իմպերիալիզմի, պրոլետարական հեղափոխության և կոմունիզմի կառուցման դարաշրջանի հանճարեղ գիտական վերլուծությունը, այդ դարաշրջանի առաջադրած հարցերի խոր լուծումը—այսպիսին է Լենինի տեսական անմահ ծառայությունը մարդկության առջև։

«Լենինը մեծագույն գիտնական էր հեղափոխության մեջ և հեղափոխական՝ գիտության մեջ,— ասված է Վ. Ի. Լենինի ծննդյան հարյուրամյակի առթիվ ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի թեզիսների մեջ,— նա նոր էտապ բացեց մարքսիստական տեսության զարգացման գործում, հարստացրեց մարքսիզմի բոլոր բաղադրիչ մասերը՝ փիլիսոփայությունը, քաղաքատնտեսությունը, գիտական կոմունիզմը»։ Վ. Ի. Լենինը, ինչպես և Մարքսն ու Էնգելսը, գիտության վրա նայում էր որպես հեղափոխական ուժի։ Ոչ ոք մտքի այդ հսկաների նման չի հասկացել գիտության հզոր իմացական ուժի նշանակությունը, և հենց այդ իմացական հզորությունը նրանք ծառայեցնում էին հասարակական պրակտիկային, պատմության առաջընթացին։ Նրանք խորապես դատապարտում էին ինչպես նեղ պրակտիցիզմն ու ուտիլիտարիզմը, գիտության նեղ-էգոիստական ըմբռնումն ու կիրառումը շահագործող դասակարգերի կողմից, նույնպես և գիտության ֆետիշացումը, հասարակական պրոգրեսից նրա անջատումն ու ինքնանպատակ դարձնելը։ Կոմունիստական աշխարհայացքի հիմնադիրները գիտությունը, ամբողջ գիտական տեսությունը օգտագործում էին որպես հեղափոխական պրակտիկայի հզոր զենք, հասարակության վերափոխման կարևորագույն միջոց։ «Առանց հեղափոխական տեսության չի կարող լինել և հեղափոխական շարժում»,— Լենինի այս բառերի մեջ բացահայտված է գիտական տեսության խոր պատմական նշանակությունը։

1

Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեությունն սկսվեց մի ժամանակաշրջանում, երբ պատմությունը օրակարգի հարց էր դարձրել հասարակության հեղափոխական վերափոխման մեծ խնդիրը։ Լենինը պատասխան տվեց իր ժամանակի հարցերին՝ դինված իր հանճարեղ նախորդների ամենահաղթ ուս-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 2, էջ 7։

մունքով՝ մարքսիստական աշխարհայացքով։ Բայց մարքսիզմի մեծագույն զորությունը նրա ստեղծագործական էության մեջ է, և նոր խնդիրները կարելի է լուծել միայն այդ ուսմունքի համակողմանի զարգացման հիման վրա։ Ամենից առաջ պետք էր բացահայտել պատմական նոր դարաշրջանի էությունը, վերլուծել այն որակական փոփոխությունները, որ տեղի էին ունենում կապիտալիստորեն զարգացած երկրների տնտեսական և առհասարակ ամբողջ հասարակական հարաբերությունների մեջ։

XIX դարի վերջից կապիտալիզմն անցնում է զարգացման իր բարձրագույն, իմպերիալիստական ստադիային։ Կապիտալիզմի նոր սկսվող աստիճանի ուսումնասիրությունը ժամանակի խոշոր տեսաբանների ուշադրության կենտրոնումն էր։ Բուրժուական գաղափարախոսները գուշակում էին կապիտալիզմի զարգացման մի նոր, ծաղկուն ժամանակաշրջան և ամեն կերպ սքողում էին այդ հասարակարգը ծվատող հակասությունները։ Նրանց կրկնում էին ռեֆորմիստներն ու ռևիզիոնիստները, որոնք պատրանքներ էին սերմանում «կազմակերպված կապիտալիզմի» հնարավորությունների մասին և «քննադատության ազատության» քողի տակ վերանայման ենթարկում մարքսիզմի հեղափոխական հիմքերը, հատկապես սոցիալիստական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին ուսմունքը։ Ռևիզիոնիզմի տեսական վարժությունները յուրօրինակ արդարացում էին հանդիսանում այն տխրահռչակ պրակտիկայի համար, որի էությունը դավաճանությունն էր բանվոր դասակարգի շահերին և ծառայակամությունը՝ իմպերիալիստական ռեակցիայի առջև։

Պատմական նոր ժամանակաշրջանի միակ գիտական բացատրությունն ու բնութագրությունը վիճակված էր Վ. Ի. Լենինին։ Նա բացահայտեց իմպերիալիզմի էությունը որպես շրջադարձ դեպի ռեակցիան բոլոր գծերով՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական։ Բայց ֆինանսական կապիտալի գերիշխանությունը ավելի ու ավելի է խորացնում կապիտալիստական կարգերի ներքին հակասությունները, ուժեղացնում ժողովուրդների շահագործումն ու ստրկացումը և, միաժամանակ, նրանց զայրույթն ու ցասումը։ Կապիտալի համեմատաբար խաղաղ տիրապետությանը փոխարինելու եկավ հեղափոխական ցնցումների ու փոթորկումների դարաշրջանը, մի դարաշրջան, որից մարդկությունը պետք է իր հեղափոխական անցումը կատարի դեպի սոցիալիզմ— այսպիսին է իմպերիալիզմի լենինյան վերլուծության կարևորագույն եզրակացությունը։

Պատմական նոր դարաշրջանի գիտական վերլուծությունից բխում էր այն հեղափոխական եզրակացությունը, որ պետք է կազմակերպել ու ղեկավարել ժողովուրդների ազատագրական պայքարը։ Վ. Ի. Լենինը սոցիալական հեղափոխության մարքսիստական տեսությունը զարգացրեց պատմական նոր ժամանակաշրջանի ոգուն ու պահանջներին համապատասխան, մշակեց սոցիալիստական հեղափոխության ստրատեգիան ու տակտիկան, ստեղծեց ուսմունք պրոլետարիատի ազատագրական պայքարի ղեկավարման մասին, ուսմունք հեղափոխական կուսակցության մասին։ Հատկապես պետք է նշել լենինյան այնպիսի հայտնագործման պատմական նշանակությունը, ինչպիսին էր սկզբնապես մի քանի, անգամ մեկ առանձին վերցրած երկրում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և դրանից բխող՝ մեկ երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության հիմնավորումը։

Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական նախօրյակին Լենինը իր հռչակավոր «Պետություն և հեղափոխություն» աշխատության մեջ մարքսիզմի թշնամիներից և ուրացողներից պաշտպանելով հեղափոխական տեսության կարևորագույն սկզբունքները և պատմության փորձի հիման վրա հարստացնելով դրանք, լուսաբանում է նոր հասարակարգի ու նրա պետականության արմատական խնդիրները և ուրվագծում այդ հասարակարգի զարգացման հեռանկարները։ Այդ աշխատության մեջ բնութագրելով հասարակական երևույթների և նրանց ապագա ծավալման գիտական հետազոտության միակ գիտական մեթոդն ու ոճը, որոնցով առաջնորդվում էր Կ. Մարքսը, Վ. Ի. Լենինը բնութագրում էր և իր սեփական մեթոդն ու ոճը. «Մարքսի մոտ,— ասում է նա,— փորձի հետք անգամ չկա ուտոպիաներ հորինելու, դատարկ դուշակություններ անելու այնպիսի բաների մասին, ինչ որ չի կարելի գիտենալ։ Մարքսը դնում է կոմունիզմի հարցն այնպես, ինչպես բնագետը կդներ մի նոր, ասենք, բիոլոգիական տեսակի զարգացման հարցը, երբ մենք գիտենք, որ այն հենց այս կերպ է ծագել ու այսինչ որոշ ուղղությամբ է կերպարանափոխվում»[2]։ Լուծելով դարաշրջանի արմատական սոցիալական պրոբլեմները, Լենինը առաջնորդվում էր և ուրիշներից պահանջում էր առաջնորդվել գիտության պահանջներով, ուսումնասիրել երևույթները կոնկրետ իրադրության մեջ, պատմական զարգացման մեջ, փոխադարձ կապերի ու հարաբերությունների մեջ։

Լենինյան հայտնագործությունների ու հանճարեղ կանխատեսությունների տեսական ու մեթոդոլոգիական բաղան մատերիալիստական դիալեկտիկան էր, որը Վ. Ի. Լենինի բնութագրությամբ՝ «աշխարհի իմացության պատմության արդյունքն է, հանրագումարը, հետևությունը»[3]։ Վ. Ի. Լենինը դիալեկտիկայի մեծագույն վարպետն էր մեր դարաշրջանում, գիտական այդ համընդհանուր մեթոդի զարգացնողն ու հետագա մշակողը։ Դիալեկտիկան ստեղծագործական ուսմունք է և պահանջում է ստեղծագործական կիրառություն։ Այդ պահանջից էր ելնում Լենինը, պայքարելով դոգմատիզմի ամեն մի դրսևորման դեմ։ Դեռևս 1899 թ. նա գրել է, որ «մենք Մարքսի թեորիայի վրա բնավ էլ չենք նայում որպես մի ինչ-որ ավարտուն ու անձեռնմխելի բանի, մենք համոզված ենք, ընդհակառակն, որ այն դրել է միայն անկյունաքարերն այն գիտության, որ սոցիալիստները պետք է առաջ շարժեն բոլոր ուղղություններով, եթե նրանք չեն ուզում կյանքից ետ մնալ»[4]։ Տեսական ժառանգության ամենաարդյունավետ օգտագործումը նրա ստեղծագործական զարգացումն է, և ոչ թե մարքսիզմի հիմնադիրների ժառանգությունն այնպես խոր չի օգտագործել, ինչպես Լենինը՝ հարստացնելով այն պատմության նոր փորձի, գիտության նոր տվյալների ընդհանրացումներով։

Մարքսիզմի ստեղծագործական զարգացման փայլուն նմուշներ են հանդիսանում Վ. Ի. Լենինի փիլիսոփայական աշխատությունները, որոնցով նա նոր աստիճանի բարձրացրեց դիալեկտիկա-մատերիալիստական աշխարհայացքը։ Ավելի քան կես դար է անցել Լենինի դասական փիլիսոփայական երկի՝ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմի» հրապարակման ժամանակից, բայց նա պահպանել է իր ամբողջ թարմությունն ու հրատապությունը։ Այդ փաստի

2 Նույն տեղում, հատ. 25, էջ 595։
3 Նույն տեղում, հատ. 38, էջ 103։
4 Նույն տեղում, հատ. 4, էջ 263։

կարևորությունն իմանալու համար հարկ կա հիշելու, թե ինչ տեմպով է զարգանում ժամանակակից գիտությունը, ինչ հիմնորոշ հայտնագործություններ է կատարում, որոնք ստիպում են նորից ու նորից խորամուխ լինել գիտության փիլիսոփայական հիմնադրույթների մեջ, ստուգել գրանք գիտության ու պրակտիկայի նոր տվյալներով։

Մարքս-լենինյան փիլիսոփայության հզորության դրսևորումներից մեկը հենց այն է, որ նա հանկարծակիի չի գալիս գիտության «ամենաարտառոց» հայտնագործությունների առջև, որ նա անդրդվելի հավատ ունի բանականության ուժի ու հնարավորությունների նկատմամբ և ոգևորում է գիտական միտքը նորանոր սխրագործությունների։ Անցյալի և ներկայի բոլոր մյուս փիլիսոփայական ուսմունքները սահմանափակ պատկերացում են ունեցել իմացության հնարավորությունների մասին կամ այսպես թե այնպես սահմանափակեր են այդ հնարավորությունները։ Միայն մատերիալիստական դիալեկտիկան է, որ կարողացավ բացահայտել իմացության էությունը, պրակտիկայի դերը իմացության մեջ և իմացության դերը պրակտիկայում, բացարձակ և հարաբերական ճշմարտության հարաբերակցությունը և ցույց տալ իմացության անսպառելիությունը։ Կարծես այսօր են գրված Վ. Ի. Լենինի մարգարեական բառերը. «Մարդկային միտքը շատ արտասովոր բաներ է հայտնագործել բնության մեջ և էլ ավելի կհայտնագործի, դրանով իր իշխանությունը մեծացնելով նրա վերաբերմամբ»[5]։

2

Բոլոր ժամանակներում գիտության մեջ տեղի ունեցած արմատական տեղաշարժերը առաջին պլանի վրա են մղել գիտության և փիլիսոփայության հարաբերակցության հարցը։ Եվ դա բնական է։ Մատերիալիստական փիլիսոփայությունը ծագել ու զարգացել է գիտության հետ միասին, հենվել է նրա նվաճումների վրա, ընդհանրացրել նրա տվյալները, պայքարել գիտության առաջադիմության համար։ Գիտության զարգացման վրա անտարբեր չեն նայել և իդեալիստական ուսմունքները։ Նրանք ձգտել են հարմարվել գիտության նոր տվյալներին, օգտագործել նրա զարգացման դժվարությունները, չարաշահել չլուծված պրոբլեմների շնորհիվ առաջացող պրոբլեմները։ Բայց անցյալի ոչ մի տեղաշարժ, որ կատարվում էր գիտության մեջ, չէր կարող համեմատվել այն պրոցեսների հետ, որոնք մեր դարագլխին նշանավորեցին մի ամբողջ հեղափոխություն բնագիտության բնագավառում։ Այդ հեղափոխության կապակցությամբ նոր ձևով դրվեց գիտության ու փիլիսոփայության հարաբերակցության հարցը, չտեսնված չափերով սրվեց պայքարը փիլիսոփայական ուղղություններ՝ գիտության նոր նվաճումների փիլիսոփայական մեկնաբանման և իրենց դիրքերը ամրապնդելու համար։

Գիտության նոր տվյալները, մատերիայի ու շարժման նոր ձևերի հայտնաբերումը և նրանց հատկությունների ուսումնասիրությունը հարկադրեցին ոչ թե առանձին շտկումներ կատարելու աշխարհի՝ գիտության ու փիլիսոփայության կողմից դարերով ստեղծված պատկերի մեջ, այլ ստեղծելու նրա նոր, դինամիկ պատկերը։ Բայց գիտության առաջադիմությունը, հատկապես գի-

---

5 Նույն տեղում, հատ. 14, էջ 375—376։

տության նվաճումների փիլիսոփայական մեկնաբանությունը հարթ չի ընթանում։ Գիտության այդ ժամանակվա ամենաարագ զարգացող ճյուղում՝ ֆիզիկայի մեջ դրսևորվեցին երևույթներ, որոնք բնութագրվեցին որպես ճգնաժամ։ Ինչպիսի հետևություններ միայն չեն արել փիլիսոփաներն ու գիտնականները բնագիտության մեջ ծավալվող հեղափոխության և ֆիզիկայի ճգնաժամի բնույթի, էության և հետևանքների մասին։ Իդեալիստական հոսանքները, հատկապես սուբյեկտիվ իդեալիստական բնույթի մախիստական դպրոցը, անտարակուսելի էին համարում «մատերիայի չքացումը», օբյեկտիվ իրականության անէացումը գիտակցությունից դուրս, շարժման հնարավորությունն առանց մատերիայի և այլն։ Աշխուժացել էր ագնոստիցիզմը, որը ֆիզիկայի նոր տվյալների մեջ տեսնում էր այն բանի հաստատումը, որ ամեն մի գիտելիք միայն պայմանական է, ամեն մի ճշմարտություն՝ միայն հարաբերական։ Հարկավոր էր Լենինի հանճարը, ցույց տալու համար, որ ֆիզիկայի ճգնաժամն ու «ֆիզիկական» իդեալիզմը ժամանակավոր երևույթներ են, անցողիկ հիվանդագին շրջան գիտության պատմության մեջ, աճի հիվանդություն, որ ծնունդ է առնում գիտության առաջադիմությունից՝ որոշակի սոցիալական պայմաններում։ Հանճարեղ խորաթափանցությամբ Լենինը կանխատեսում էր, որ «ֆիզիկայի, ինչպես և արդի ամբողջ բնագիտության հիմնական մատերիալիստական ոգին կհաղթի բոլոր և ամեն տեսակ ճգնաժամերը, բայց մետաֆիզիկական մատերիալիզմը դիալեկտիկական մատերիալիզմով անպայման փոխարինելու պարագայում միայն»[6]։ Բնագիտության ժամանակակից նվաճումների ընդհանրացումն ու իմաստավորումը մատերիալիստական դիալեկտիկայի դիրքերից՝ մեծագույն նշանակություն ունեցավ թե՛ բնագիտության և թե՛ փիլիսոփայության հետագա զարգացման և արդասավոր փոխազդեցության համար։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր տարբերել գիտության առողջ, կենդանի և կենսունակ ծնունդը այն մեռյալ արտադրանքներից, որոնք կապված են այդ նույն ծնունդի հետ և պետք է հեռացվեն նրանից։ Ժամանակակից գիտության այդ կենդանի ու կենսունակ ծնունդը դիալեկտիկական մատերիալիզմն է, որը, Վ. Ի. Լենինի բնութագրությամբ, «բնագիտության միակ ճիշտ մեթոդն ու միակ փիլիսոփայությունն է»։

Բնագիտության և փիլիսոփայության փոխհարաբերության պրոբլեմը գտնվում էր Լենինի ուշադրության կենտրոնում։ Նա ընդգծում էր, որ բնագիտությունը չի կարող ըստ ամենայնի զարգանալ առանց լայն ու ճիշտ աշխարհայացքային բազայի, իսկ փիլիսոփայությունը չի կարող մնալ իր կոչման բարձրության վրա, եթե ժամանակին չիմաստավորի ու չընդհանրացնի բնագիտության տվյալները, չմշակի նրա արդի վիճակին համապատասխանող մեթոդ, չբացահայտի գիտության զարգացման օրինաչափությունները։ Վ. Ի. Լենինի մեծագույն ծառայություններից մեկն այն էր, որ նա ուղիներ մատնանշեց և մշակեց անհրաժեշտ մեթոդներ՝ կանխելու համար գիտական մտքի տատանումները թե՛ դեպի իդեալիզմի ճահիճը և թե՛ դեպի մեռյալ դոգմատիզմը։ Դիալեկտիկան,— ընդգծում էր նա,— պահանջում է հասկացությունների ճկունություն, երևույթների բազմակողմանի հետազոտություն՝ իրենց ամբողջ հակասականությամբ։ Դիալեկտիկան իր կենդանի շունչն է մտցնում կոնկրետ

---

6 Նույն տեղում, էջ 409։

գիտությունների բնագավառը, և դրանով գիտությունը մեծապես պարտական է Լենինին։

Մատերիալիստական փիլիսոփայության և բնագիտության փոխադարձ կապի անհրաժեշտությանը Վ. Ի. Լենինը հատուկ անդրադարձավ արդեն հեղափոխության հաղթանակից հետո՝ իր հայտնի «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատության մեջ։ Այստեղ ամենայն խորությամբ ցույց է տրված բնագիտության և մատերիալիստական փիլիսոփայության դաշինքի նշանակությունը ռեակցիոն գաղափարախոսության դեմ պայքարելու համար։ «Առանց լուրջ փիլիսոփայական հիմնավորման,— սովորեցնում էր Լենինը,— ոչ մի բնական գիտություն, ոչ մի մատերիալիզմ բուրժուական գաղափարների գրոհի և բուրժուական աշխարհայեցողության վերականգնման դեմ մղվող պայքարում դիմանալ չի կարող»[7]։ Բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում դիմանալու և այդ պայքարը մինչև վերջ հասցնելու համար բնագետն ինքը պետք է լինի ժամանակակից մատերիալիստ, պետք է զինվի դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքով։

Վ. Ի. Լենինի այս և մյուս ծրագրային դրույթների նշանակությունը դժվար է գերագնահատել։ Բնագիտության զարգացումը առաջ է քաշում նորանոր փիլիսոփայական հարցեր, որոնց լուծումը հնարավոր է միայն ժամանակակից մատերիալիզմի դիրքերից՝ փիլիսոփայական իդեալիզմի դեմ մղվող հետևողական, սկզբունքային պայքարում։ Այս պայքարը կապված է մեծ դժվարությունների հետ ամենից առաջ այն պատճառով, որ ժամանակակից իդեալիզմը,— հատկապես նեոպոզիտիվիստական հոսանքները,— ինքն է հանդես գալիս գիտության անունից, հայտարարում իրեն «բնագիտության փիլիսոփայություն», հավակնում «գիտական» լուծում տալ բնագիտության փիլիսոփայական պրոբլեմներին։ Այստեղ ևս անգնահատելի է Լենինի փիլիսոփայական երկերի նշանակությունը։ Լենինը ցույց է տվել, որ իդեալիզմը, ժխտելով օբյեկտիվ ճշմարտությունը, դրանով իսկ հանդես է գալիս գիտության սկզբունքների դեմ, որ հռչակելով գիտության «չեզոքությունն» ու անկուսակցականությունը իդեալիզմի ու կրոնի դեմ մատերիալիզմի մղած պայքարում՝ նա փաստորեն ծառայություն է կատարում կրոնի առջև։ Լենինն է մերկացրել իդեալիզմի հռչակած «օբյեկտիվիզմի» կեղծությունը և ցույց տվել, որ «օբյեկտիվիզմը» ինքը բուրժուական փիլիսոփայության կուսակցականության յուրատեսակ դրսևորումն է։ Մատերիալիստական փիլիսոփայության ու բնագիտության դաշինքի, իդեալիզմի ու կրոնի դեմ անհաշտ պայքար մղելու անհրաժեշտության լենինյան գաղափարներով են տոգորված սոցիալիստական երկրի գիտությունն ու գիտական փիլիսոփայությունը, և այդ գաղափարների իրականացմամբ նրանք մեր օրերում նորանոր հաջողություններ են ձեռք բերում իմացության բոլոր բնագավառներում։

3

Վ. Ի. Լենինի համար փիլիսոփայությունը, և առհասարակ գիտությունը, ինչ-որ ինքնանպատակ բան չէր։ Զարգացնելով մարքսիզմի հիմնադիրների դրույթները պրակտիկայի մասին, նա հիմնավորեց այն խոր գաղափարը, որ

7 Նույն տեղում, հատ. 33, էջ 274։

«կյանքի, պրակտիկայի տեսակետը պետք է լինի իմացաբանության առաջին և հիմնական տեսակետը»[8]։ Եվ հենց պրակտիկայի պահանջները, հասարակության առջև ծառացած անհետաձգելի խնդիրների լուծման պահանջները նկատի ուներ Լենինը, երբ ձեռնամուխ էր լինում լուծելու փիլիսոփայության և գիտության բազմազան կնճռոտ հարցեր։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմի առաջին տարիներին նա սահադին ժամանակ է նվիրում փիլիսոփայական պրոբլեմների մշակմանը. պետք էր տեսական մտքի ամենայն պատրաստությամբ գիմավորել պատմության վերահաս իրադարձությունները, պետք էր տեսականորեն զարգացնել դիալեկտիկական մեթոդը՝ կյանքի դիալեկտիկան, հասարակության զարգացման օրենքները խորապես ըմբռնելու, ժողովրդի ազատագրական պայքարը ղեկավարելու համար։ Պատմության անցյալին է պատկանում այն, որ կարելի էր սոցիալական վերափոխման խնդիրները լուծել տարերայնորեն, որ նոր հասարակարգը կարող էր փոխարինել հնին այն ժամանակ, երբ տեսական միտքը դեռևս չէր հասել հասարակական ֆորմացիաների հաջորդափոխման գազափարին։ Սոցիալիստական վերափոխումները պահանջում են տեսական նախապատրաստություն, գիտական բազա։ Սոցիալիստական հեղափոխությունը ղեկավարող կուսակցությունը պիտի զինված լինի հասարակագիտական մտքի բոլոր նվաճումներով, հեղափոխական տեսությամբ։ Վ. Ի. Լենինը անդուլ կերպով զարգացնում էր տեսությունը և միաժամանակ կիրառում այն պրակտիկայում։ Սեր դարաշրջանի մեծագույն տեսաբանը տեսնում էր ծավալվող երևույթների մեջ ավելին, քան ուրիշները, տեսնում էր նրանց զարգացման տենդենցը, կանխատեսում էր ապագան։ Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին, սուր քննադատության ենթարկելով դոկտրինյորական նեոմտությունն այն մարդկանց, որոնք սոցիալիզմը պատկերացնում էին որպես մի ինչ-որ հեռավոր, անհայտ, մութ ապագա, նա մարգարեաբար ազդարարում էր. «Իսկ սոցիալիզմը այժմ մեզ վրա նայում է արդի կապիտալիզմի բոլոր պատուհաններից, սոցիալիզմը անմիջականորեն, պրակտիկ կերպով պատկերանում է ամեն մի խոշոր միջոցառումից, որը մի քայլ է ներկայացնում դեպի առաջ՝ այդ նորագույն կապիտալիզմի բազայի վրա»[9]։ Գիտական այսպիսի խորաթափանցության դեպքում միայն հնարավոր էր հեղափոխությունից առաջ տեսականորեն մշակել տնտեսական ու սոցիալական վերափոխումների բնույթը հեղափոխության հաղթանակից հետո։ Կոմունիստական կուսակցության, աշխատավոր ժողովրդի առջև կանգնած էին վիթխարի խնդիրներ՝ պատմության մեջ դեռևս չհետազոտված ուղիների բացում, նոր պետականության ստեղծում, պրոլետարիատի դիկտատուրայի իրականացում. և Լենինի հանճարը կռում էր մի տեսություն, որ պետք է լուսավորեր այդ նոր ուղիները, կոմունիստական շինարարության պրակտիկան։

Հեղափոխական տեսության և ամբողջ գիտության դերը մեծապես աճում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո։ Ինչունդ է առնում մի հասարակարգ, որը առանց գիտական տեսության չէր կարող լուծել պատմության կողմից իր առջև դրված խնդիրները։ Նոր հասարակարգ կառուցելու հա-

8 Նույն տեղում, հատ. 14, էջ 179։
9 Նույն տեղում, հատ. 25, էջ 460։

մար մարքսիզմը տալիս է ղեկավար սկզբունքներ, որոնց ուժը դրսևորվում է այն ժամանակ, երբ այդ սկզբունքները հմտորեն կիրառվում են պատմական տվյալ ժամանակաշրջանի և կոնկրետ իրադրության նկատմամբ, բազմակողմանիորեն հաշվի են առնվում առկա պայմանների առանձնահատկությունները, դասակարգային ուժերի տեղադրությունը, երբ պատմության նոր փորձով ստուգվում և հարստացվում են տեսական մտքի նվաճումները։ Կոնկրետ իրադրության վերլուծությունը մարքսիզմի էությունն է, բազմիցս նշել է Վ. Ի. Լենինը։ Եվ Լենինի տեսական ու պրակտիկ գործունեության համար առավել հատկանշական է պատմական նոր իրադրության արագ ու խոր ըմբռնումը, այդ իրադրությանը համապատասխանող գործելակերպ մշակելը։ Հեղափոխության մեծագույն հանճարն ու ստրատեգը ամենից ավելի շուտ, ավելի խոր ու բազմակողմանի էր գնում ու լուծում խաղաղ շինարարության հարցերը, վճռում տնտեսական ու կուլտուրական շինարարության ընթացիկ և հեռանկարային հարցերը, մշակում կոմունիստական շինարարության հանճարեղ ծրագիրը։

Վ. Ի. Լենինի աշխատություններում կարմիր թելով անցնում է այն միտքը, որ կոմունիստական հասարակություն կարելի է կառուցել գիտության նվաճումների բազայի վրա և հասարակության գիտական ղեկավարության պարագայում միայն։ Լենինի ծառայությունների թվին է պատկանում այն խնդիրների լուծումը, որոնք որոշում են գիտության բախտը նոր հասարակարգում, նրա զարգացման ուղիներն ու հեռանկարները։ Ամենից առաջ պետք է ապացուցել, որ հաղթանակած ժողովուրդը ի վիճակի է և պետք է գլխավորի կուլտուրական շինարարությունը, իր սպասարկմանը դնի գիտության և տեխնիկայի նվաճումները, ապահովի գիտության չտեսնված զարգացում և նոր բնույթի կիրառություն։ Դեռևս հեղափոխության նախօրյակին Վ. Ի. Լենինը հակահարված տվեց բուրժուական այն գաղափարախոսներին, որոնք գուշակում էին, թե սոցիալիզմն անհամատեղելի կլինի հասարակական առաջադիմությանը առհասարակ և գիտության առաջադիմությանը՝ հատկապես։ Հեղափոխության հաղթանակից հետո, երբ անմիջական պրակտիկ խնդիր դարձավ երկրի կուլտուրական շինարարությունը, պետք էր մինչև վերջ մերկացնել թե՛ ռևիզիոնիստական այն գրությը, ըստ որի աշխատավոր ժողովուրդն ի վիճակի չի լինի տիրապետելու գիտությանն ու տեխնիկային ու դուրս բերելու Ռուսաստանը դարավոր հետամնացությունից, և թե՛ «ձախ» աղմկարարների այն կանցեպցիան, որն անթույլատրելի էր համարում հին հասարակությունից ժառանգություն մնացած գիտությունն ու մասնագետներին օգտագործել սոցիալիստական շինարարության մեջ։ Ռևիզիոնիստներին ու ձախ ֆրազյորներին վիճակված չէր հասկանալու և նրանք չէին էլ ուզում հասկանալ, թե ստեղծագործական ինչպիսի եռանդ, նախաձեռնություն և ունակություններ կան թաքնված ժողովրդական զանգվածների մեջ, թե ինչի է ընդունակ հեղափոխությամբ արթնացած և կյանքի նորացման պայքարով համակված ժողովուրդը։ Մարքսիզմի ոգին հասկացող ամեն մի մարդու համար հասկանալի պիտի լիներ, որ հասարակական հին հարաբերությունների ոչնչացումը բնավ չի նշանակում անցյալի հոգևոր նվաճումների ժխտում, այլ ընդհակառակն, նրանց լայն օգտագործման և հետագա զարգացման ապահովում։ Բայց հեղափոխության հորձանուտն էին ընկել մարդիկ, որոնք միայն սերտել էին մարքսիստական ֆրազներ, անսահման հեռու մնալով մարքսիզմի կենդանի, ստեղծարար ոգուց։

Վ. Ի. Լենինը բազմիցս անդրադարձել է անցյալի ժառանգության հարցին և ցույց տվել, որ պրոլետարիատը չի կարող կառուցել նոր հասարակարգ, առանց լայնորեն օգտագործելու մարդկային մտքի դարավոր նվաճումները, չի կարող ստեղծել նոր կուլտուրա, չհենվելով արդեն գոյություն ունեցող կուլտուրայի վրա, չշարունակելով նրա լավագույն տրադիցիաները։ Սերունդները կփոխարինեն իրար և ամեն մի նոր սերունդ գաղափարական լիցք կստանա Վ. Ի. Լենինի՝ կոմերիտմիության III համագումարում արտասանած ճառից, որի մեջ ցույց է տրված, թե ինչ պետք է սովորի և ինչպես պետք է սովորի նոր հասարակություն կառուցող սերունդը։ Այդ հասարակությունը ժխտում է այն ամենը, ինչ խանգարում է մարդկությանը ստեղծել իսկական գիտություն և ծառայեցնել այն ժողովրդի շահերին, ինչ անջրպետում է միտքը կենդանի պրակտիկայից, ինչ կեղծ լույսի տակ է մեկնաբանում շրջապատող աշխարհը։ Այդ հասարակարգը չի կարելի կառուցել առանց գիտության հիմունքներին տիրապետելու, առանց ստեղծելու մի նոր կուլտուրա, որը «պետք է լինի օրինաչափ զարգացումը գիտելիքների այն պաշարի, որը մշակել է մարդկությունը կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական հասարակության ճնշման տակ»[10]։ Եվ հենց այն պատճառով, որ գիտելիքների այդ պաշարները ստեղծվել են սոցիալական ճնշման ու կեղեքման պայմաններում, նրանք իրենց վրա կրում են սոցիալական արատների հետքերը, ուստի և պետք է յուրացվեն քննադատաբար։ Անցյալի գիտական ժառանգության հարցը Վ. Ի. Լենինը կապում էր հին մասնագետների օգտագործման հարցի հետ։ Այն հանգամանքը, որ հեղափոխությունից հետո հին մասնագետների մի մասը թշնամաբար էր վերաբերվում նոր իրավակարգին, ամենևին հիմք չէր տալիս ամբողջ հին ինտելիգենցիայի նկատմամբ անբարյացակամ քաղաքականություն վարելու։ Վ. Ի. Լենինը խորապես հավատացած էր, որ սոցիալիստական շինարարության փաստը անխուսափելիորեն ինտելիգենցիային կբերի մեր շարքերը, որ նրանք հենց իրենց գիտության փորձով կհամոզվեն նոր հասարակարգի առավելությունների մեջ։ Մ. Գորկու հետ ունեցած զրույցներից մեկում նա ասել է. «Մեկը մյուսի հետևից մենք կձգենք ռուս ու եվրոպացի բոլոր Արքիմեդներին, և այն ժամանակ աշխարհը, ուզի-չուզի, բայց շուռ կգա»։ Պատմության փորձը ցույց տվեց Վ. Ի. Լենինի իրավացիությունը. հին ինտելիգենցիայի գերակշռող մասը անցավ սոցիալիզմ կառուցողների բանակը, իր հարուստ գիտելիքները ի սպաս դնելով երկրի վերականգնման ու զարգացման պահանջներին։ Դրանց թվում էին համաշխարհային հռչակի գիտնականներ, որոնք անջնջելի հետք են թողել սովետական գիտության պատմության մեջ։ Հայտնի է և Լենինի հոգատարությունը գիտության ու գիտնականների նկատմամբ. մեր երկրի համար ամենածանր օրերին անգամ նա ժամանակ ու միջոցներ էր գտնում օգնելու գիտության մշակներին, բարոյական զորավիգ լինելու նրանց, ոգևորելու։ Նա տանել չէր կարողանում ամեն մի անտարբերություն ու անզգուշություն դիտական հիմնարկների ու գիտնականների նկատմամբ։ Գիտության նկատմամբ լենինյան հոգատարությունը ժառանգել է կոմունիստական կուսակցությունը, որը անում է ամեն ինչ ապահովելու համար գիտության առաջընթացը։

---

10 Նույն տեղում, հատ. 31, էջ 348—349։

Գիտության մեծ ռահվիրան միաժամանակ սովետական պետության գիտական աշխատանքի մեծ կազմակերպիչն էր։ Դեռևս քաղաքացիական պատերազմի ծանր տարիներին նա կազմում է «Գիտատեխնիկական աշխատանքների պլանի ուրվագիրը», որտեղ որոշվում է գիտության բնագավառի հիմնական խնդիրը՝ երկրի արդյունաբերության վերակազմակերպման ու տնտեսական վերելքի պլանավորումը, որը ընդգրկում էր պրոբլեմների մի լայն շրջանակ՝ սկսած արդյունաբերության տեղաբաշխումից մինչև մեր երկրի պահանջների ինքնուրույն բավարարումը։ Լենինյան այդ պատմական փաստաթղթի նշանակությունը անգնահատելի է, այն դարձավ մեր երկրի հետագա բոլոր հեռանկարային պլանների հիմքը։

Վ. Ի. Լենինը ամենայն խորությամբ ընդգծում էր երկրի կուլտուրական վերափոխության, գիտության արագ զարգացման ու լայն կիրառման նշանակությունը կոմունիստական հասարակության կառուցման գործում։ Դիմելով նոր սերնդին, նա ասում էր. «Ձեր առաջ ծառացած է շինարարության խնդիրը, և դուք կարող եք վճռել այն, միայն տիրապետելով ժամանակակից ամբողջ գիտությանը, կարողանալով կոմունիզմը սերտած պատրաստի ֆորմուլաներից, խորհուրդներից, դեղատոմսերից, առաջադրություններից, ծրագրերից վերածել ձեր անմիջական աշխատանքը միավորող կենդանի գործի, կոմունիզմը դարձնել ձեր գործնական աշխատանքի ուղեցույցը»[11]։

Վ. Ի. Լենինը ամեն ինչից վեր էր դասում հեղափոխական տեսության, գիտության և պրակտիկայի կապը։ Նոր հասարակության արշալույսին նա ազդարարում էր. «Հասել է հենց այն պատմական մոմենտը, երբ թեորիան վերածվում է պրակտիկայի, կենդանանում է պրակտիկայով, ուղղվում է պրակտիկայով, ստուգվում է պրակտիկայով»[12]։ Տեսությունը վերածվում է պրակտիկայի—սա նշանակում է, որ հեղափոխական տեսությունը դառնում է հասարակական պրակտիկայի ղեկավարման ուսմունք, որ մարքսիզմ-լենինիզմի գաղափարները մարմնանում են կոմունիզմ կառուցող մարդկանց աշխատանքի, խիզախումների, նախագծումների մեջ, սա նշանակում է, որ գիտության տվյալները մտնում են արտադրության պրոցեսը, դառնում արտադրության կազմակերպման ու ղեկավարման միջոց, դառնում անմիջական արտադրողական ուժ և արտադրողական ուժերի զարգացման հզոր գործոն։

Սոցիալիստական երկրի գիտությունը իր վրա միշտ զգացել է լենինյան գաղափարների կենարար ազդեցությունը, առաջնորդվել է այդ գաղափարներով՝ կոմունիստական հասարակարգի համար մղվող պայքարում։ Լենինյան գաղափարները, լենինյան ստեղծագործական միտքը զինել և զինում է սովետական երկրի գիտությունը դասակարգային սկզբունքայնությամբ, կուռ աշխարհայացքով, ժողովրդին հասցնելու պատրաստակամությամբ։ Շատ բանով է Վ. Ի. Լենինի հանճարին պարտական այդ գիտությունը իր պատմական նվաճումներով, իր ստեղծագործական խոյանքներով, իր պրակտիկ կիրառությամբ։ Նրա դերը մեծապես աճել է այժմ, երբ մարդկությունը թևակոխել է գիտատեխնիկական մեծ հեղափոխության դարաշրջանը, երբ գիտությունը իրականացնում է նախագծումներ, որոնք նախկին սերունդները երևակայել անգամ

11 Նույն տեղում, էջ 353։
12 Նույն տեղում, հատ. 26, էջ 503։

չէին կարող, երբ սկսվել է տիեզերքի նվաճումը և արտադրության զարգացման մի նոր ու հզոր աստիճանի իրականացումը։ Սոցիալիզմի երկրի մարդիկ եղան կենսագործողները գիտության այն նոր դերի, որ բացահայտել էր հանճարեղ առաջնորդը, ազդարարելով. «Իսկ այժմ տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները կդառնան համաժողովրդական սեփականություն, և այսուհետև մարդկային խելքն ու հանճարը էլ երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի»[13]։

Լենինի ստեղծագործական հանճարը լուսավորում է գիտության և ամբողջ հասարակության զարգացման ճանապարհը։

---

13 Նույն տեղում, էջ 436։